Հավելված N 12
ՀՀ փոխվարչապետի
N 577-Ն որոշման

«ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՓՐԿԱՐԱՐ» ԿՐԾՔԱՆՇԱՆԻ ՏԵՍԱԿԸ, ՁԵՎԸ ԵՎ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

1. «Առաջին կարգի փրկարար» կրծքանշանը (ձևը կցվում է) շնորհվում է «Առաջին կարգի փրկարար» փրկարարի որակավորման դաս ունեցող փրկարարական ծառայողներին:

2. «Առաջին կարգի փրկարար» կրծքանշանը շնորհում է Նախարարը:

3. «Առաջին կարգի փրկարար» կրծքանշան ստացող փրկարարական ծառայողը պարտավոր է վերադարձնել փրկարարի որակավորման դասին համապատասխան իրեն նախկինում շնորհված կրծքանշանը:

4. Փրկարարական ծառայությունից ազատվելիս «Առաջին կարգի փրկարար» կրծքանշանը ենթակա է վերադարձման:

5. «Առաջին կարգի փրկարար» կրծքանշանն իրենից ներկայացնում է օվալաձև՝ ուռուցիկ մակերեսով շրջանակ, ընդհանուր ֆոնը՝ սպիտակ: Կրծքանշանի երկարությունը 60 մմ է, իսկ միջնամասի լայնությունը՝ 45 մմ: Կրծքանշանի վերին հատվածի կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը, իսկ ներքևի հատվածում՝ կենտրոնում, պատկերված է Հայաստանի Հանրապետության դրոշը: Կրծքանշանը եզրագծված է 10 մմ լայնությամբ արծաթագույն դափնեպսակով: Կրծքանշանի միջնամասում՝ ամբողջ լայնությամբ (ձախից աջ) պատկերված է Հայաստանի Հանրապետության ծածանվող դրոշը: Կրծքանշանի կենտրոնում՝ դրոշի վրա, 30 մմ տրամագծով կարմիր ֆոնի վրա պատկերված է շրջանակ: Շրջանակի եզրագծով՝ վերևի հատվածում, գրված են «ՀԱՅԱՍՏԱՆ», ներքևի հատվածում՝ «ՓՐԿԱՐԱՐ» բառերը: Շրջանակի կենտրոնում գտնվող 20 մմ տրամագիծ ունեցող երկրագունդը խորհրդանշող կարմիր շրջանակում զետեղված է արծիվ և ութաթև աստղ: Արծվի և շրջանակի եզրագծի ներքևի հատվածում գրված

«ՓՐԿԱՐԱՐ» բառի միջնամասում նշված է հռոմեական «I» թիվը: Կրծքանշանի վրա չի թույլատրվում՝ պատկերների և գրվածքների աղավաղում:

6. «Առաջին կարգի փրկարար» կրծքանշանը հակառակ կողմի կենտրոնական մասում ունի պտուտակային ամրակ՝ հագուստի ամրացնելու համար, որի տակ առկա է կրծքանշանի հերթական համարը: Ամրակը բաղկացած է 2 մասից՝ հեղույսից՝ Մ2.5 X 8 մմ չափսերով և պտուտակից՝ 20 մմ տրամագծով:

7. «Առաջին կարգի փրկարար» կրծքանշանի տուփի արտաքին չափերը՝ (բարձրություն X լայնություն X երկարություն) 35X90X90 մմ: Տուփը՝ ուղղանկյուն, արտաքինից ծածկված սև արհեստական կաշվով, ներսի կողմից ունի կրծքանշանի արտաքին եզրագծին համապատասխան սպիտակ հարթակ՝ իր ճշգրիտ դիրքավորման համար: Տուփը բացվում է զսպանակային հատուկ ծխնիների միջոցով՝ դիմացի կողմից դեպի վերև: Ծխնիները և տուփի կափարիչը ներսից պատված են սպիտակ թավշյա գործվածքով: Կափարիչը ներսի կողմից միջադրված է սպունգանման նյութով:

8. «Առաջին կարգի փրկարար» կրծքանշանի հետ տրվում է վկայական:

Զև

«Առաջին կարգի փրկարար» կրծքանշան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

01.09.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ